ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/33» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «24» 12 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Լևոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 31-ին կնքված ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ (Վերին Դվին) համայնքի Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/33» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Գնման պայմանագրում փոփոխություն կատարելու թույլտվություն տալու մասին» N 1481–Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում աշխատանքի կատարման ժամկետը՝ **«19 նոյեմբեր 2018 թ.»** բառերը փոխարինել **«01 մայիս 2019 թ.»** բառերով:

1.1.2 Պայմանագրի թիվ 2՝ «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 3 (երեք) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011018927 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ Հասցեն՝ ք. Եղվարդ Նար-Դոս փ 28ա հեռ.՝ +374-93908868 էլ. հասցեն՝ sargismarianna@mail.ru ՀՎՀՀ 03308717, հ/հ 2473700821480000 Արդշինբանկ ՓԲԸ Նաիրի մ/ճ
Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ	L. Լևոնյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված

«24» 12 2018 թ. կնքված N 2 համաձայնագրի

Հավելված թիվ 2

« 31 » մայիսի 2018 թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/33» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200-2	ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ (Վերին Դվին) համայնքի Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	5990000	5990000	5990000	5990000	5990000	5990000	5990000	5990000	**5990000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054, h/h 900011018927
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Գլխավոր քարտուղար՝

_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Եղվարդ Նար-Դոս փ 28ա
հեռ.՝ +374-93908868
էլ. հասցեն՝ sargismarianna@mail.ru
ՀՎՀՀ 03308717,
h/h 2473700821480000
Արդշինբանկ ՓԲԸ Նաիրի մ/ճ

Տնօրեն՝

_____ **L. Լևոնյան**
(ստորագրություն)

Կ.Տ